

## ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը մասնակցեց բնապահպանական թեմայով դպրոցական միջոցառմանը

03.04.2014



Ապրիլի 2-ին Եղեգնաձոր քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցում կենսաբանության ուսուցչուհի Արմինե Մխիթարյանի նախաձեռնությամբ կայացավ Էկոլոգիական ցուցահանդես-միջոցառում՝ «Կյանք տուր թափոններին» խորագրով, որին մասնակցում էին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արփիար Ղազարյանը, դպրոցի կառավարման խորհրդի անդամ Վոլոդյա Սմբատյանը, Եղեգնաձորի փոխքաղաքապետ Վարդան Ավագյանը և հարակից համայնքների դպրոցների ղեկավարներ:

Միջոցառումը կազմակերպվել էր 1-4-րդ դասարանների աշակերտների ուժերով, որոնք զանազան թափոններից պատրաստել էին շատ գեղեցիկ իրեր և հետաքրքիր պատկերներ:

Բացման խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Անուշ Գրիգորյանը: Միջոցառումն սկսվեց 3-րդ և 8-րդ դասարանի աշակերտների ողջույնով, որն ավելի շուտ բնապահպանական ահազանգող կոչ էր՝ ուղղված հանրության անդամներին և պատկան մարմիններին՝ պահելու-պահպանելու և խնայելու Հայաստանի չքնաղ և ինքնատիպ բնաշխարհը:

Միջոցառումը մեկն էր «Ես ուզում եմ ապրել մաքուր և գեղեցիկ միջավայրում» ծրագրային շարքից, որն իր մեջ ներառում է 3 փուլ: Առաջին փուլը բնապահպանական պաստառների մրցույթն է եղել, որին մասնակցել են դպրոցի 9-րդ դասարանների աշակերտները, 2-րդ փուլը «Կյանք տուր թափոններին» ձեռքի աշխատանքների ցուցահանդեսն էր: Ծրագրի 3-րդ փուլը՝ «Մարդը և էկոլոգիան» թեմայով համաժողովը, կկայանա ապրիլի 22-ին, ուր կամփոփվեն կատարված աշխատանքներն ու արդյունքները: